Ավետիք Իսահակյան

Անապատում, միրաժի մեջ մի բեդվին

Անապատում, միրաժի մեջ մի բեդվին
Շողքն է տեսել մի աղջկա գեղեցիկ,
Եվ փնտրում է հոգեսըլա՛ց, տենչագին
Ծով – կարոտով ա՛յն աղջկան գեղեցիկ:

Եվ ծարավուտ անապատում հրրավառ,
Տատասկներում, արևի տակ բոցափայլ
Փնտրում է նա՛ նրան անվե՛րջ, անդադա՛ր
Եվ մեռնում է վեհ սիրո մեջ հոգեզմայլ;

Եվ քրնի մեջ – աննյութական, անվախճան,
Տեսնում է նա այնպե՞ս քնքո՛ւշ ու սիրուն
Շողքը չքնաղ այն նազելի աղջկան
Եվ փնտրում է նրան հավերժ երազում…

1904